

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ԿԻՑ

ՄՊՈՐՏԻ ԵՎ ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ԽՈՐՀՐԴԻ

20.07.2021 ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Խորհրդի առաջին նիստը տեղի ունեցավ 2021 թ. հուլիսի 20-ին ժ. 19:00 Երևանի քաղաքապետարանում՝ խորհրդի նախագահի տեղակալ, Երևանի փոխքաղաքապետ Գայանե Մելքոմ Մելքոմյանի ղեկավարությամբ:

Նիստը վարում էր խորհրդի քարտուղար՝ Երևանի ավագանու անդամ Արման Անտոնյանը:

Նիստին մասնակցում էին խորհրդի 19 անդամներից 16-ը:

Նիստին խորհրդի քարտուղարը ներկայացրեց Երևան համայնքի ենթակայության տակ գտնվող մարզական կազմակերպությունների գործունեությունը՝ նրանց մեծ մասի անարդյունավետ աշխատանքը, տարեկան միջոցառումների պլանը՝ նրանց հետագա վերանայման անհրաժեշտությամբ:

Համաձայն օրակարգի՝ խորհրդի յուրաքանչյուր անդամ նիստին հնարավորություն ունեցավ ներկայանալու, ապա ոլորտի վերաբերյալ պատկերացումներն ու դիտարկումները բարձրաձայնելու՝ խորհրդի արդյունավետ գործունեության և ծրագրերի իրականացման նպատակով:

Նիստին խորհրդի անդամները առաջարկեցին հաջորդիվ ներկայանալ առաջարկներով՝ միջոցառումների ու հետագա անելիքների ծրագրերով:

Խորհրդի նիստի ավարտին որոշվեց 2021 թ. օգոստոս ամսիս հրավիրել հերթական նիստ՝ քննարկելու առաջարկվող ծրագրերը:

*Արման Անտոնյան*

*Երևանի ավագանու անդամ, խորհրդի քարտուղար*

